

Քննարկվեց քաղաքացի Լևոն Մնացականյանի 03.05.2012թ. գանգատը «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ 11.04.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410453 վարչական ակտի, ինչպես նաև «ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՏՏ պետի 27.04.2012թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 173761 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ աշխատակիցների կողմից 29.03.2012թ-ին կազմվել է թիվ 1410453 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է, որ ֆիզիկական անձ Լևոն Մնացականյանը առանց պետական գրանցման իրեն պատկանող «Ֆորդ տրանզիտ» մակնիշի 21սս377 պետհամարանիշի միկրոավտոբուսով Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքից Երևան 2012թ. փետրվար ամսին միայնակ զբաղվել է ավտոտրանսպորտային գործունեությամբ (ուղևորափոխադրմամբ): Հիմնվելով ֆիզիկական անձ Լևոն Մնացականյանի գրավոր բացատրությանն ապօրինի գործունեության արդյունքում համապատասխան ժամանակահատվածում իրացման շրջանառությունը կազմում է 2000 դրամ:

Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին պարբերության, Օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չունեցող (չհաշվառված) կամ հարկային մարմիններում չհաշվառված անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ (ապօրինի գործունեություն) զբաղվելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս երկու հարյուր հազար դրամից: Համաձայն ֆիզիկական անձ Լևոն Մնացականյանի գրավոր բացատրության, ապօրինի գործունեության արդյունքում համապատասխան ժամանակահատվածում իրացման շրջանառությունը կազմում է 2000 դրամ, որից գանձվու է տուգանք 200.000 դրամ:

Համաձայն «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն)՝ գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում անհատ ձեռնարկատերերի համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված տարեկան համախառն եկամուտների 10 տոկոսի չափով (բայց 60.000 դրամից ոչ պակաս), որն ապօրինի գործունեություն իրականացնողների համար ապօրինի գործունեության մասով վերջնական սոցիալական վճարների պարտավորություն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ 31-րդ բաժնի պետը 11.04.2012թ-ին ընդունել է թիվ 1410453 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ գումարով 260.000 դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը 27.04.2012թ-ին «ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՏՏ պետը ընդունել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 173761 որոշումը, որով կիրառվել է վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 169-րդ հոդվածի դրույթները և Լևոն Մնացականյանի նկատմամբ նշանակվել է վարչական տույժ՝ գումարով 30.000 դրամի:

Քաղաքացի Լևոն Մնացականյանի գանգատում մասնավորապես նշված է.

2012թ-ի ապրիլի 12-ին «ԿԱ ՊԵԿ ՕՇՎ 31-րդ բաժնի կողմից ինձ է ուղարկվել թիվ 1410453 վարչական ակտը՝ հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության վերաբերյալ, որի համաձայն վճարվող գումարի չափը կազմում է 260000 դրամ:

Մինչ այդ, ես նույն բաժնի աշխատակիցների պահանջով գրել էի բացատրագիր այն մասին, որ այդ օրը ես Երևան էի գնում անձնական գործերով՝ երեխայիս էի տանում հիվանդանոց: Դիսպեչերը խնդրեց Երևան փոխադրել ուղևորներին, քանի որ իրենց ավտոմեքենան անսարքություններ ուներ: Այդ օրը ես չեմ հանդիսացել որպես ուղևորափոխադրող և վաստակել եմ ընդամենը 2000 դրամ, բացի վառելիքի գումարից: Այդ հանգամանքը հաշվի չի առնվել օպերատիվ հետախուզության վարչության 31-րդ բաժնի աշխատակիցների կողմից:

27.04.2012թ. «ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՏՏ պետը որոշում է կայացրել ոչ միայն չվերացնել վերոնշյալ ակտը, այլև թիվ 173761 որոշման համաձայն նշանակել է վարչական տույժ 30 000 դրամի չափով:

Ես առարկում եմ այդ ակտերը, որոնք ես չեմ ստորագրել:

Խնդրում եմ վերացնել թիվ 1410453 ակտը և թիվ 173761 որոշումը, քանի որ դրանք վնասում են ոչ միայն ինձ, այլև իմ ընտանիքին՝ կնոջս և երկու անչափահաս երեխաններին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով քաղաքացի Լևոն Մնացականյանի և վերոգրյալ արձանագրությունը կազմած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.01.2012թ. թիվ 22-Ա հրամանով հաստատվել է Հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրենքով նախատեսված պատասխանատվության կիրառման և հարկային պարտավորությունների առաջադրման ընթացակարգը (այսուհետ Ընթացակարգ): Ընթացակարգի 17-րդ կետի համաձայն. <Վարչական ակտի՝

1) խախտման նկարագրական մասում ձևակերպվում են վարչական վարույթի հարուցման հիմքը, հղումը իրավական ակտի նորմերին, խախտման նկարագրությունը, գործի փաստական հանգամանքներն ու գնահատված ապացույցները, հղումներով իրավական ակտերի այն նորմերին, որոնք խախտվել են,

2) ակտի պատճառաբանական մասում նշվում է ակտի ընդունման իրավական հիմքերը, հղումները հարկային պարտավորություն և պատասխանատվություն սահմանող իրավական ակտերի նորմերին, արտացոլվում է վճարման ենթակա ընդհանուր գումարը, որի հաշվարկը, որպես ներդիր, կազմում է վարչական ակտի անբաժանելի մասը (ինչի մասին նշում է կատարվում վարչական ակտում):>

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 11.04.2012թ-ի թիվ 1410453 վարչական ակտի ուսումնասիրությունից պարզվեց, որ այն կազմվել է Ընթացակարգի 17-րդ կետով նախատեսված պահանջների խախտմամբ: Մասնավորապես.

- վարչական ակտի խախտման նկարագրական մասում, ձևակերպված չէ վարչական վարույթի հարուցման հիմքը,

- վարչական ակտում նշված չէ խախտման նկարագրությունը, գործի փաստական հանգամանքներն ու գնահատված ապացույցները:

Բացի այդ, սույն գործին առնչվող նյութերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրեց այն փաստը, որ վարչական վարույթի ընթացքում կազմված փաստաթղթերում սխալ է նշված քաղաքացի Լևոն Մնացականյանի գործունեության արդյունքում առաջացած իրացման շրջանառության չափը: Մասնավորապես, թե ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ աշխատակիցների կողմից 29.03.2012թ-ին կազմված թիվ 1410453 արձանագրությունում և թե վարչական ակտին կից հաշվարկում նշված է, որ քաղաքացի Լևոն Մնացականյանի ապօրինի գործունեության իրացման շրջանառությունը որոշվել է հիմնվելով վերջինիս գրավոր բացատրության վրա և կազմում է 2000 դրամ: Սակայն, քաղաքացի Լևոն Մնացականյանի 21.03.2012թ-ի բացատրության համաձայն, մեջբերում. <Այ տեղափոխությունից ինձ մնացել է երկու հազար ութարյուր դրամ եկամուտ>: Այսինքն, քաղաքացի Լևոն Մնացականյանի իրացման շրջանառությունը կազմել է ոչ թե 2000, այլ՝ 2800 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Այսինքն, գործունեությունը որպես ձեռնարկատիրական որակելու համար պարտադիր պայման է հանդիսանում շահույթ ստանալու նպատակի առկայությունը:

Հանձնաժողովը գտնում է, որ ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը հաստատված համարելու համար պետք է հիմնավորվեր քաղաքացի Լևոն Մնացականյանի կողմից շահույթ ստանալու նպատակով հիշատակված գործունեությամբ զբաղվելու փաստը:

Ձեռնարկատիրական գործունեության հասկացության մեկնաբանությունը տվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր թիվ 1161(ՏԴ) քաղաքացիական գործով 01.08.2007 թվականի որոշմամբ: Նշված որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

<Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացու կողմից իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելիս, անհրաժեշտ է օրենքով սահմանված պարտադիր հատկանիշների առկայությունը որոշել մասնավորապես հետևյալ հանգամանքները բացահայտելուց հետո.

1. արդյո՞ք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով,

2. արդյո՞ք գործունեությունը կրում է պարբերական բնույթ,

3. արդյո՞ք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով,

4. արդյո՞ք գործունեությունն իրականացվում է որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի է համարել առևտրի իրականացման կամ ծառայությունների մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, ապրանքի մեծ քանակության և տեսականու առկայությունը,

5. արդյո՞ք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին,

6. այլ առանձնահատուկ հատկանիշներ>:

Վերոգրյալից հետևում է, որ անձի գործունեությունը ձեռնարկատիրական որակելու համար անհրաժեշտ է որպեսզի դրանում առկա լինեն << վճարել դատարանի որոշմամբ նշված բոլոր հանգամանքները:

Քննարկվող դեպքում չի պարզվել և բացահայտվել, թե քաղաքացի Լևոն Մնացականյանի գործունեության մեջ առկա են արդյոք վերը թվարկված հանգամանքները, թե ոչ: Մասնավորապես, քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ քաղաքացի Լևոն Մնացականյանի գործունեությունը չի կրել պարբերական բնույթ՝ վերը հիշատակված դեպքից բացի քաղաքացի Լևոն Մնացականյանի կողմից ուղևորափոխադրման գործունեությամբ զբաղվելու այլ փաստ չի արձանագրվել: Այսինքն, քաղաքացի Լևոն Մնացականյանի գործունեությունը պարբերական բնույթ չի կրել: Հետևապես Հանձնաժողովը գտնում է, որ առկա չեն բավարար հիմքեր և ապացույցներ քաղաքացի Լևոն Մնացականյանի գործունեությունը որպես ապօրինի ձեռնարկատիրական որակելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ խախտվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 37-րդ հոդվածի պահանջները, այն է՝ Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Իր հերթին, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում քաղաքացի Լևոն Մնացականյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը: Սակայն ինչպես որ վերը նշվեց, առկա չեն բավարար հիմքեր և ապացույցներ քաղաքացի Լևոն Մնացականյանի գործունեությունը որպես ապօրինի ձեռնարկատիրական որակելու համար:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<արկային ծառայության մասին> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել << ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 11.04.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410453 վարչական ակտը, ինչպես նաև << ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 27.04.2012թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 173761 որոշումը:



Հանձնաժողովի նախագահ

S.ՔԱՐՍԵՂՅԱՆ